ԱՆԴՐԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ԺԴԱՆՈՎ

Օգոստոսի 31-ին ծանր հիվանդությունից հետո վախճանվեց կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր կառուցողներից ու գործիչներից մեկը, Համկ(բ)Պ կենտկոմի Քաղբյուրոյի անդամ, Համկ(բ)Պ կենտկոմի Քարտուղար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ, գեներալ-գնդապետ ընկեր Անդրեյ Ալեքսանդրովիչ Ժդանովը:

Անդրեյ Ալեքսանդրովիչ Ժդանովը ծնվել է 1896 թ. փետրվարի 26/14-ին Մարիուպոլ քաղաքում, ժողովրդական ուսուցիչների տեսչի ընտանիքում։ 16 տարեկան պատանի (1912 թվին) Ա. Ա. Ժդանովը իր հոր՝ Տվեր տեղափոխվելուց հետո մտնում է ռևոլուցիոն շարժման մեջ, մասնակցում է Տվեր քաղաքի (այժմ Կալինին քաղաք) սովորող երիտասարդության սոցիալ-դեմոկրատական խմբակներին։

Ա. Ա. Ժդանովը բոլշևիկյան պարտիայի շարքերն է մտնում 1915 թվին։ Նա պարտիական ակտիվ աշխատանք է կատարում Տվեր քաղաքի բանվորական ռայոնում։ Ընկեր Ժդանովը շուտով դառնում է պարտիական աշխատող։ Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում, մոբիլիզացվելով բանակ, նա բոլշևիկյան պրոպագանդա է մղում զինվորների մեջ, մասնակցում է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի նախապատրաստման ու անցկացման գործին Ուրալում։ Քաղաքացիական պատերազմի տարիներին ընկեր Ժդանովը զբաղվում է քաղաքական լուսավորությամբ Կարմիր Բանակի զորամասերում, պարտիական և սովետական աշխատանք է կատարում Ուրալում և Տվերում։ 1922 թվից ընկեր Ժդանովը Տվերի նահանգական գործադիր կոմիտեի նախագահն էր։ 1924—1934 թվերին նա ղեկավար պարտիական աշխատանքի էր Գորկու երկրամասում՝ Համկ(բ)Պ Գորկու նահանգական կոմիտեի քարտուղար, Գորկու երկրամասային կոմիտեի քարտուղար։

Համկ(բ)Պ 14-րդ համագումարում Ա. Ա. Ժդանովը ընտրվում է Համ. կ(բ)Պ կենտկոմի անդամության թեկնածու, 16-րդ համագումարում՝ Համ. կ(բ)Պ կենտկոմի անդամ, իսկ 17-րդ համագումարից հետո նա ընտրվում է Համկ(բ)Պ կենտկոմի Քարտուղար, Համկ(բ)Պ կենտկոմի Քաղբյուրոյի անդամության թեկնածու։ Ընկեր Ժդանովը կատարում է պարտիական և պետական մեծ աշխատանք։ Նա շատ ուշադրություն է նվիրում իդեոլոգիայի և մարքսիստական-լենինյան տեսության հարցերին։ Սովետական գրողներ՝

միության առաջին համագումարում նրա ելույթը նշեց սովետական գրականության զարգացման կարևորագույն խնդիրները։

1934 թվի դեկտեմբերին Ս. Մ. Կիրովի չարանենգ սպանությունից հետո, պարտիան ընկեր Ա. Ա. Ժդանովին ուղարկում է աշխատանքի Լենինգրադի պարտիական կազմակերպությունը, որը նա գլխավորում է 1934 թվից մինչև 1944 թիվը ներառյալ ժամանակամիջոցում։

Գատարելով պարտիայի կամքը, Ա. Ա. Ժդանովը իրեն հատուկ բոլշևիկյան կրքոտությամբ ոգևորում և մոբիլիզացնում է Լենինգրադի պարտիական կազմակերպությունը՝ ջախջախելու և արմատախիլ անելու տրոցկիստական-զինովևական երկերեսանիներին ու դավաճաններին, էլ ավելի սերտորեն է համախմբում Լենինգրադի բոլշևիկներին Համկ(բ)Գ Կենտկոմի և ընկեր Ստալինի շուրջը։

18-րդ համագումարի նախօրյակին Համկ(բ)Գ Կենտկոմը ընկեր Ա. Ա. Ժդանովին հանձնարարում է պարտիայի ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի ղեկավարությունը։ Նա հանդես է գալիս նաև պարտիայի 18-րդ համագումարում պարահական շինարարության հարցերի վերաբերյալ զեկուցումով։ Պարտիայի ամեն մի հանձնարարություն Ա. Ա. Ժդանովը կատարում էր, նվիրվելով այդ գործին ամբողջ հոգով։ Պարտիայի 18-րդ համագումարից հետո ընկեր Ժդանովը ընտրվում է Համկ(բ)Գ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ։

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին պարտիան և կառավարությունն ընկեր Ա. Ա. Ժդանովին հանձնարարում են Լենինգրադի պաշտպանությունը կազմակերպելու գործը։ Իրագործելով Համկ(բ)Գ Կենտկոմի և ընկեր Ստալինի ցուցումները, Լենինգրադի բոլշևիկները ընկեր Ժդանովի գլխավորությամբ հանդիսացան Լենինի քաղաքի հերոսական պաշտպանության հոգին։ Լենինգրադի ռազմաճակատում կատարած աշխատանքի համար ընկեր Ժդանովին շնորհվում է նախ գեներալ-լեյտենանտի կոչում և ապա գեներալ-գնդապետի կոչում։

Իր պարտիական և ռազմական աչքի ընկնող աշխատանքի համար ընկեր Ժդանովը պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով, «Կարմիր գրոշի» շքանշանով, Սուվորովի առաջին աստիճանի շքանշանով, Կուտուզովի առաջին աստիճանի շքանշանով, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Հայրենական Մեծ Պատերազմում հաղթանակ տանելուց հետո, երբ պարտիան և ժողովուրդը անցան խաղաղ շինարարության, պարտիայի և երկրի կյանքում աչքի ընկնող տեղ գրավեցին իդեոլոգիական աշխատանքի հարցերը։ Հանդիսանալով ականավոր մարքսիստական տեսաբան և Լենինի-Ստալինի մեծ գաղափարների տաղանդավորագույն պրոպագանդիստ, ընկեր Ժդանովը հանդես է գալիս գրականության, արվեստի, փիլիսոփայության հարցերի, միջազգային դեության հարցերի վերաբերյալ մի շարք փայլուն զեկուցումներով։

Ա. Ա.Ժդանովը գանվում էր միջազգային բանվորական շարժման ղեկավար գործիչների առաջին շարքերում։ Նրա ելույթները լայնորեն հայտնի են բոլոր երկրների աշխատավորներին։

Մեծ Սաալինի հավատարիմ աշակերտ և զինակից ընկեր Ժդանովը բոցաշունչ եռանդով պայքարում էր կոմունիզմի գործի համար, երբեք չէր խնայում իր ուժերն ու առողջությունը։ Նրա եռուն կյանքն ու գործունեությունը պարտիային և ժողովրդին անձնուրաց կերպով ծառայելու օրինակ է։ Նա վաստակել է պարտիայի և բոլոր աշխատավորների ջերմ սերը Լենինի—Ստալինի մեծ գործի նկատմամբ իր անհուն նվիրվածությամբ, իր խոր սկզբունքայնությամբ, որը թույլ չի տալիս որևէ շեղում պարտիայի գլխավոր գծից։

Դնաս բարով, մեր թանկագին բարեկամ ե մարտական ընկեր։

Ա. Անդրեևով	Ա. Կոսիգին	Գ. Պոպով
Լ. Բերիա	Ա. Կուզնեցով	Ի. Սաալին
Ն. Բուլգանին	Գ. Մալենկով	Մ. Սուսլով
Ն. Վոզնեսենսկի	Ա. Միկոյան	Ն. Խրուշչով
Ա. Վասիլևսկի	Վ. Մոլոտով	Ն. Շվերնիկ
Լ. Կագանովիչ	Պ. Պոնոմարենկո	Մ. Շկիրյատով